ԱՐՁԱՆԳՐՈՒԹՅՈՒՆ 7

ք. Իջևան 22. 02. 2022թ.

Նախագահ՝ Գ. Ավետիսյան /դեկանի պաշտոնակատար/

Քարտուղար՝ Ա. Ալեքսանյան

Առցանց կազմակերպած նիստին մասնակցել են Մ. Միքայելյանը, Գ. Հովհաննիսյանը, Ա. Պոտոսյանը, Ա. Սարիբեկյանը, Ա. Ուլիխանյանը, Հ. Մարգարյանը, Գ. Ալեքսանյանը, Գ. Մինասյանը, Ա. Եգանյանը, Պ. Ասլիբեկյանը, ֆակուլտետի ՈՒԳԸ-ի նախագահ Ի. Վարդանյանը, ֆակուլտետի ՈՒԽ-ի նախագահ Ա. Եսայանը, Հ. Սանթրոսյան, Ա. Բարսեղյանը: Նիստը անց է կացվել zoom.us հարթակում, գիտական խորհրդի նախագահն է Գ. Ավետիսյան, քարտուղարը՝ Ա. Ալեքսանյանը:

Նիստի օրակարգը ներկայացրեց Գ. Ավետիսյանը:

Օրակարգ

1. Ֆակուլտետի «Ֆինանսներ» /ըստ ոլորտի/ ԿԾ ընթացիկ մոնիթորինգի հաշվետվության քննարկում /Զեկ. Մ. Միքայելյան/:
2. Իրականացված պրակտիկաների վերաբերյալ ամբիոնային հաշվետվությունների ներկայացում / Զեկ. Ա Ալեքսանյան/:
3. 2021-22թթ. ուստարվա 1-ին կիսամյակի քննաշրջանի ամփոփում/Զեկ. Գ. Ավետիսյան/:
4. 2021-2022 ուստարվա երկրորդ կիսամյակի անվանական կրթաթոշակների թեկնածուների առաջադրում/ Զեկ. Գ. Ավետիսյան/:
5. Ընթացիկ հարցեր.

5.1 Հաղորդում 2021-2022 ուստարվա հեռակա ուսուցման II կիսամյակի նախապատրաստական աշխատանքների մասին/ Զեկ. Գ. Ավետիսյան/:

Բաց քվեարկությամբ 16 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ համամասնությամբ որոշվեց. Որոշում 1/1 ¬

Հաստատել նիստի օրակարգը

1. Լսեցին. - Ֆակուլտետի «Ֆինանսներ» /ըստ ոլորտի/ ԿԾ ընթացիկ մոնիթորինգի հաշվետվության քննարկման մասին /Զեկ. Մ. Միքայելյան/:

Մ. Միքայելյան հանգամանալի ներկայացրեց «Ֆինանսներ» /ըստ ոլորտի/ ԿԾ ընթացիկ մոնիթորինգի հաշվետվությունը: Մասնավորապես նշեց, որ «Ֆինանսներ (ըստ ոլորտի)» կրթական ծրագրի մոնիթորինգ առաջին անգամ է իրականացվում: Այդ պատճառով էլ չեն կարող անդրադարձ կատարել Մոնիթորինգի կարգով նախատեսված «Նախորդ մոնիթորինգի արդյունքներով ծրագրի որակի բարելավմանն ուղղված միջոցառումների պլանի կատարողականին»: Մ. Միքայելյանը ներկայացրեց նախորդ երկու ուսումնական տարիների կատարողականի ցուցանիշները: Մշտադիտարկման նպատակով դիտարկվել են.

1. ԿԾ-ի վերաբերյալ ուսանողական հարցման արդյունքները,
2. շրջանավարտների բավարարվածության հարցման արդյունքները,
3. ծրագրի շահակիցների արձագանքը,
4. համագործակցային կապերը,
5. ծրագրի փոփոխությունները,
6. ծրագրի վերանայման և արտաքին գնահատման արդյունքները:

Խմբի ղեկավարն հավելեց, որ հիմք ընդունելով SWOT վերլուծության արդյունքները՝ ամփոփ ձևով ներկայացվել է որակի բարելավման գործողությունների պլան՝ըստ պատասխանատուների և ժամկետների: Որի իրականացումը կբարելավվի Ֆինանսներ/ըստ ոլորտի/ ԿԾ-ի որակը: Մ. Միքայելյանը ներկայացրեց մոնիթորինգի աշխատանքային խմբի եզրակացությունը. Ֆինանսներ/ըստ ոլորտի/ ԿԾ-ը իրատեսական է և կարելի է շարունակել իրականացնել նշված ծրագիրը:

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.8 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին.- Հավանություն տալ Ֆինանսներ /ըստ ոլորտի/ԿԾ ընթացիկ մոնիթորինգի հաշվետվությանը և ներկայացնել ԿԲԴՎ բաժին:

Որոշեցին.- Հաստատել որակի բարելավման գործողությունների պլանը և շարունակել իրականացնել Ֆինանսներ /ըստ ոլորտի/ԿԾ-ը:

2. Լսեցին.- Իրականացված պրակտիկաների վերաբերյալ ամբիոնային հաշվետվության մասին / Ձեկ. Ա Ալեքսանյան/:

Ա. Ալեքսանյանը հաղորդեց, որ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի «Ֆինանսներ» մասնագիտության հեռակա ուսուցման V կուրսի արտադրական պրակտիկան անցկացվել է 2021թ. դեկտեմբերի 1-ից մինչև 2022 թ. հունվարի 11-ը ընկած ժամանակահատվածում, որին մասնակցում էին 27 ուսանող: Պրակտիկան կազմակերպվել է հանրապետության գործող հիմնարկ-ձեռնարկություններում: Նա մասնավորեցրեց, որ արտադրական պրակտիկան իրականացվել է ՎՏԲ Իջևանի մասնաճյուղում (1), Տավուշի մարզպետարանում(4), Իջևանի(4), Դիլիջանի(3), Բերդի(1) քաղաքապետարաններում, վարկային կազմակերպությունում(1), մարզի տարբեր ՍՊԸ-ում(11), մարզի համայնքապետարանում և կից կազմակերպությունում(2):

Պրակտիկան իրականացվել է նախապես հաստատված պրակտիկայի ծրագրի համաձայն:

Արտադարական պրակտիկայի նպատակն է խորացնել ուսանողների գործնական հմտությունները տնտեսագիտության, ազգային տնտեսության, հաշվապահական հաշվառման, բանկային գործի ոլորտներում, զարգացնել կարողությունները տեղեկատվության կուտակման և վերլուծության ասպարեզում:

Ուսանողները հնարավորություն են ունեցել կիրառել տեսական գիտելիքները պրակտիկ մասնագիտական գործունեության մեջ:

Պրակտիկայի ողջ ժամանակահատվածում համագործակցել ենք կազմակերպությունների ղեկավարների հետ, իրականացրել ենք ընթացիկ գնահատման աշխատանքներ: Կազմակերպությունների կողմից կցված պրակտիկայի ղեկավարները դրական են բնութագրել ուսանողներին՝ ընդգծելով նրանց տեսական պատրաստվածության բավարար մակարդակը:

Պրակտիկայի պաշտպանության ժամանակ ուսանողները ներկայացրեցին պրակտիկայի ընթացքում իրենց կատարած աշխատանքները:

Արտահայտվեցին.- Մ. Միքայելյանը

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.8 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին.- Իրականացված պրակտիկաների վերաբերյալ ամբիոնային հաշվետվությունը ընդունել ի գիտություն:

3. Լսեցին.- 2021-22թթ. ուստարվա 1-ին կիսամյակի քննաշրջանի ամփոփման մասին/Զեկ. Գ. Ավետիսյան/:

Դեկանի պաշտոնակարը հաղորդեց, որ տնտեսագիտության ֆակուլտետում 2021-2022 ուստարվա առաջին կիսամյակի քննաշրջանին մասնակցել է 132 ուսանող: «Ֆինանսներ» կրթական ծրագրով 75 ուսանող, «Զբոսաշրջություն» կրթական ծրագրով 57 ուսանող: Քննաշրջանը հաղթահարել է 83 ուսանող, 11 ուսանող ստացել են գերազանց գնահատականներ /«Ֆինանսներ» ԿԾ 8, «Զբոսաշրջություն» ԿԾ 3 ուսանող/: Ֆակուլտետում բացարձակ առաջադիմությունը կազմել է 62,88%/ Զբոսաշրջություն ԿԾ 66,67%, Ֆինանսներ 60%/: Անբավարար գնահատականներ ստացել են 49 ուսանող /«Ֆինանսներ» ԿԾ 30, «Զբոսաշրջություն» ԿԾ 19 ուսանող/: Անվճար ուսուցման համակարգով սովորում է 33 ուսանող/«Ֆինանսներ» ԿԾ 21, «Զբոսաշրջություն» ԿԾ 12 ուսանող/, բացարձակ առաջադիմությունը կազմում է

84,8%: Վճարովի ուսուցման համակրգով սովորում է 99 ուսանող/«Ֆինանսներ» ԿԾ 54, «Զբոսաշրջություն» ԿԾ 45 ուսանող/, քննաշրջանը հաղթահարել է 55 ուսանող, բացարձակ առաջադիմությունը կազմում է 55,6%:

Քննաշրջանը կազմակերպվել է սահմանված ժամկետներում: Գրավոր բողոքներ չկան:

Արտահայտվեցին.- Մ. Միքայելյանը, Գ. Հովհաննիսյանը

Ղեկավարվելով ԵՊՀ հիմանդրամի ԻՄ Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.11 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին.- 2021-22թթ. Ուստարվա ֆակուլտետի I կիսամյակի առկա ուսուցման քննաշրջանի ամփոփված արդյունքները ընդունել ի գիտություն:

4. Լսեցին. - 2021-2022 ուստարվա երկրորդ կիսամյակի անվանական կրթաթոշակների թեկնածուների առաջադրման մասին/ Զեկ. Գ. Ավետիսյան/:

Դեկան հիշեցրեց մասնաճյուղում գործում է անվանական կրթաթոշակի նշանակման կարգ պահանջները: Ղեկավարվելով ԵՊՀ ԻՄ ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգի բաժին 4-ի 34 կետով՝ առաջարկվում է «ԵՊՀ » անվանական կրթաթոշակի ներկայացնել Զբոսաշրջություն IV կուրսի ուսանողուհի Իննա Ենգիբարյանին /ցուցաբերել է յոթ կիսամյակ անընդմեջ գերազանցություն և հասարակական ակտիվություն/, «Շավարշ Մարգարյան» անվանական կրթաթոշակի ներկայացնել Ֆինանսներ / ըստ ոլորտի/ IV կուրսի ուսանողուհի Արաքսյա Բաղդասարյանին /ցուցաբերել է հինգ կիսամյակ անընդմեջ գերազանցություն և հասարակական ակտիվություն/, «Սահակ Զորափորեցի» անվանական կրթաթոշակի՝ Զբոսաշրջություն IV կուրսի ուսանողուհի Լաուրա Ուլիխանյանին /ցուցաբերել է յոթ կիսամյակ անընդմեջ գերազանցություն և հասարակական ակտիվություն/, Իջևան

քաղաքի անվանական կրթաթոշակ, որին ներկայացվեց Փիրումյան Մանեն, Ֆինանսներ /ըստ ոլորտի/ մասնագիտության III կուրս /հինգ կիսամյակ անընդմեջ գերազանցություն/:

Գ. Ավետիսայանը նշեց, որ 2021-22 ուստարվա երկրորդ կիսամյակից Մասնաճյուղում գործում են Արտակ Ցուցուլյանի անվան կրթաթոշակ, որին ներկայացված է Ֆինանսներ /ըստ ոլորտի/ մասնագիտության IV կուրսի ուսանողուհի Դիանա Սանթրոսյանը/ հինգ կիսամյակ ամընդմեջ գերազանցություն/ և 44-օրյա պատերազմի մասնակից ուսանողների անվան կրթաթոշակ, այս կիսամյակ կրթաթոշակը կոչվում է Շիրակ Գասպարյանի անվան կրթաթոշակ, որին ներկայացված է Զբոսաշրջություն III կուրսի ուսանողուհի Նարե Ոսկանյանը/ հինգ կիսմայակ գերաազանցություն և հասարակական ակտիվություն/: Գ. Ավետիսյանը հավելեց, որ Շիրակ Գասպարյանի, Արտակ Ցուցուլյանի անվան և Իջևան քաղաքի անվանական կրթաթոշակները մրցութային են և 4 ֆակուլտետներց մրցույթը հաղթած ուսանողը կստանա համապատասխան կրթաթոշակը:

Միաձայն կողմ քվեարկելով՝ գիտախորհրդի կազմը հավանության արժանացրեց 2021-2022 ուստարվա երկրորդ կիսամյակի անվանական կրթաթոշակ ստացողների կազմը և երաշխավորեց ներկայացնել ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի հաստատմանը:

Ղեկավարվելով ԵՊՀ ԻՄ ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգի 34 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին - Հավանության արժանացնել 2021-2022 ուստարվա երկրորդ կիսամյակի անվանական կրթաթոշակի հավակնորդների թեկնածությունը և ներկայացնել ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի հաստատմանը:

5. Ընթացիկ հարցեր.

5.1. Լսեցին.- Հաղորդում 2021-2022 ուստարվա հեռակա ուսուցման II կիսամյակի նախապատրաստական աշխատանքների մասին/ Զեկ. Գ. Ավետիսյան/:

Գ. Ավետիսյանը հաղորդեց, որ 2021-2022 ուստարվա հեռակա ուսուսման II կիսամյակի ուսումնական գործընթացները արդյունավետ կազմակերպելու նպատակով Ֆակուլտետում իրականացվել են մի շարք աշխատանքներ: Մասնավորապես նշեց, որ կազմվել են ֆակուլտետում գործող երկու մասնագիտությունների գծով 2021-22 ուստարվա II կիսամյակի դասատախտակները՝ ըստ տվյալ կիսամյակում դասավանդվող դասընթացների: Դրանք քննարկվել են մյուս ֆակուլտետների պատասխանատուների հետ՝ զուգադիպումներից խուսափելու նպատակով: Կազմվել է առաջին կիսամյակի հեռակա ուսուցման լուծարքային շրջանի ժամանակացույցը: Ամբիոններին հանձնարարվել է ուշադրության կենտրոնում պահել ավարտական աշխատանքների կատարման ընթացքը: Ավարտական կուրսի ուսանողներին և ղեկավարներին է տրամադել ԵՊՀ ԻՄ բակալավրի ավարտական աշխատանքի պատրաստման և գնահատման կարգը:

Արտահայտվեցին.- Գ. Հովհաննիսյանը, Մ. Միքայելյանը:

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.8 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին.- 2021-2022 ուստարվա հեռակա ուսուցման II կիսամյակի ուսումնական գործընթացի կազմակերպման նախապատրաստական աշխատանքների մասին հաղորդումը ընդունել ի գիտություն:

Գիտական խորհրդի նախագահ՝ ***Գ. Ավետիսյան***

Քարտուղար՝ ***Ա. Ալեքսանյան***